

## Հայտարարություն դոլարային պարտատոմսերի հրապարակային առաջարկի վերաբերյալ

2021 թվականի դեկտեմբերի 6-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ «Լույսեր» ՓԲԸ հրապարակային առաջարկի միջոցով նախատեսում է տեղաբաշխել անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր՝ հետևյալ պայմաններով.

Դասը	Անվանական արժեկտրոնային
Անվանական արժեքը	1000 ԱՄՆ դոլար
Ընդհանուր ծավալը	1 500 000 ԱՄՆ դոլար
Քանակը	1 500 հատ
Շրջանառության ժամկետը	3 տարի
Արժեկտրոնային տոկոսադրույքը	7%
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	Կիսամյակային
ISIN	AMLUYSB22ER1
Տեղաբաշխողը	ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ

Ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկ նախագահի 05/11/2021թ –ի N 1/576Ա որոշմամբ:

Ներդրողները պարտատոմսերի ծրագրային ազդագրի տպագիր տարբերակները կարող են ձեռք բերել ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 39 հասցեում և Լույսեր ՓԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան 0031, Լենինգրադյան 31 բն. 12 հասցեում:

Պարտատոմսերի ծրագրային ազդագիրը, թողարկման վերջնական պայմանները, հայտ-հանձնարարականի ձևը և պարտատոմսերի գնի հաշվարկը ըստ տեղաբաշխման օրերի հրապարակվել են ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ –ի կայքում (Հղում՝ [www.armenbrok.am](http://www.armenbrok.am)) և Լույսեր ՓԲԸ –ի կայքում ([luyser.am](http://luyser.am)):

Պարտատոմսեր ձեռք բերելու նպատակով ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները և պատշաճ կերպով դրանք ներկայացնեն տեղաբաշխողին: Դրանով նրանք կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, որով էլ այդ պայմանները պարտադիր կդառնան ներդրողների համար:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողին առձեռն կամ Տեղաբաշխողի հետ համաձայնեցված կապի միջոցով:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը լրացնելուց և պատշաճ կերպով ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է տեղաբաշխման նպատակով ստորև ներկայացված բանկերից մեկում բացված Տեղաբաշխողի

հաշվեհամարներից որևէ մեկին կատարի պարտատոմսերի ձեռքբերման հայտ-  
հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ  
գումարի վճարում՝ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն.

«ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ - 2500000122610101

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ - 11817000030101

«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ - 217004089991102

«Էվոկա Բանկ» ՓԲԸ - 1660000928160201

Ներդրողը, պարտատոմսերի ձեռք բերման համար, պարտադիր պետք է ունենա Հայաստանի  
Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում կամ որևէ այլ լիցենզավորված պահառուի մոտ  
բացված արժեթղթերի սեփականատիրոջ հաշիվ:

### **Թողարկող**

#### **«Լույսեր» ՓԲԸ**

ՀՀ, ք. Երևան, 0031, Լենինգրայան 31, բն 12

Հեռ՝ (+37444) 30 06 30, 30 66 30

Էլ.-փոստ՝ [info@luyser.am](mailto:info@luyser.am)

Կայք՝ [www.luser.am](http://www.luser.am)

### **Տեղաբաշխող**

#### **«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ**

ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 39

Հեռ՝ (+37411) 59 00 00

Էլ.-փոստ՝ [armenbrok@armenbrok.com](mailto:armenbrok@armenbrok.com), [ib@armenbrok.com](mailto:ib@armenbrok.com)

Կայք՝ [www.armenbrok.com](http://www.armenbrok.com)